

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



**Սույն աշխատանքը արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ի. Ռ. ՊԱԼԵՅ

Դիմու և 75 կ.

374

թ-15

ՀՈՒՇԱՏԵՑԻ ԿՈՒՆՏԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՀԱՄԱՐ

Հասակավորների սկզբնական հանրակրթական դպրոցներում


Կարդալու, գրելու և գրքի ու լրագրային

աշխատանքների մասին

ԹԱՐԳՄԱՆԵՑ Մ. ԽՈՐԱՅԵԼՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԹԻՖԼԻՍ
1932



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСПРОИДЕНІЯ
Академії Наук
СССР

ՑԱՆԿ

ԺԵՐԵՄ

Նախաբան	— 3
1. Ինչպես պարապել ընթերցանության դասը կիսագրագետների հետ	— 5
2. Ինչպես պարապել գրության դասը կիսագրագետների հետ	— 14
3. Ինչպես տաճել լրագրային աշխատանքը կիսագրագետների հետ	— 24
4. Ինչպես տաճել զրքի աշխատանքը կիսագրագետների հետ	— 28
Աշխատանքի նյութ	— 31
Որինակելի դաս № 1	—
Որինակելի դաս № 2	— 34

ՆԱԽԱԲԱՆ

Այս հուշատեսրը զրված ե այն կուլտբանակայինների համար, վորոնք առաջին անգամ են սկսում պարապել հասակավոր կիսագրագետների հետ։ Կուլտբանակայինը (մանավանդ գյուղի) հավագցյուտ կարող կլինի լավ ուսումնասիրել դասավանդման յեղանակները։ Կիսագրագետներին թե ինչպես ե հարկավոր սովորեցնել, նա կիմանա փորձված մեթոդիստի խորհրդներից, գործնական աշխատանքների ընթացքում թույլ տված սխալների վերաբերմամբ մեթոդիստի ցուցմունքներից, մատչելի երթից և դասեր հաճախելով։ Բայց կարդացածը, լսածն ու տեսածը՝ նույնիսկ պրակտիկ աշխատանքների ժամանակ, ժամանակի ընթացքում մոռացվում ե։ Հենց այստեղ ե, վոր հուշատեսրը պետք ե ոգնի կուլտբանակայինին։ Կրծատ կերպով կհիշեցնի նրան պարապմունքի ձեռն ու կարգը։ Իսկ հուշատեսրի կարդալը դժվար չե, վորովհետև նա շատ մեծ չե։

Վորպեսզի հուշատեսրը կարձառու լինի, այստեղ շատ մանրամասնություններ և որինակներ չեն նշանակված։ Ահա թե ինչու կուլտբանակայինը միմիայն հուշատեսրով չպետք ե բավականանա։ Բանավոր խորհրդներից և մատչելի գրքույներից նա կիմանա, թե ինչպես պետք ե պարապել կիսագրագետների հետ։ Իսկ այս հուշատեսրը պարապմունքի ժամանակ կծառայի վորպես մշտական տեղեկատու և ուղեցույց։

Հուշատեսրը միշտ աչքի առաջ ունենալով, կուլտբանակայինը հեշտ կյուրացնի և կհասկանա մեթոդիստի ուղղած սխալները և խորհրդները պարապմունքների ժամանակ։ Հուշատեսրի մեջ կան բաց տեղեր։ Նրանք մեթոդիստի համար են թողած։ Այստեղ մեթոդիստները այցելությունների ժամանակ լրացուցիչ և բացարարական ցուցմունքներ ե նշանակում։ Մեթոդիստն այստեղ կարող ե նշանակել, թե

11 7 JUL 2013

52. 373

32/1
СА 478

ՄԵՐՈԴԻԱՏԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կուլտրանակայինը հուշատերի վեր մասն և թերի լրացրել կամ բոլորովին չի լրացրել, կամ ուղիղ չե լրացրել, ինչպես պետք ե հասկանալ առանձին-առանձին տեղերը, վիրտեղ գտնել լրացուցիչ նյութեր և այլն, և այլն:

Մանրամասն ծանոթանալու համար, թե ինչպես պետք ե անցնել գրել-կարդալը կիսագրագետների հետ, կուլտրանակայինը կարող ե այդ իմանալ իմ փոքրիկ գրքույկ՝ "Чтение и письмо в начальной общеобразовательной школе взрослых. Беседы с культурмейцами и начинающими учителями". ГИЗ, 1930 г. Ավելի փորձված և շրջանային մեթոդիստների համար

իմ կողմից առաջարկված ե՝ "Родной язык в занятиях со взрослыми. Вопросы методики", 4-ое издание, Коп. изд. "Мир".

Կուլտրանակայինների համար հուշատերին, իրեւ աշխատանքի նյութ, կցված են որինակելի պարագմունքների սխեմաներ. Կուլտրանակայինն ինքնուրույն կերպով լրացնելով այդ սխեման ընտրած նյութերով, կսովորի դասնուղիդատնելու ձեզ: Կուլտրանակայինն աշխատանքը սխեմայով կարող է տանել՝ անհատապես կամ կոլեկտիվ՝ կուլտրանակայինների կոնֆերանսում, բայց անպայման մեթոդիստի ղեկավարությամբ:

Ի. ՊԱԼԵՑ



59321-66

Ի՞նքության ուժը Ընթերթականության ԴԱՍԸ ԿԻՍԱԳՐԱ-
ԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ

Ի՞նչ ՆՊԱՏԱԿՈՎ ՑԵ Ի՞նքության ՏԱՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Կուլտրանակայինն, քո խնդիրն ե կիսագրագետին այնպես սովորեցնել, վոր նա ընթերցանության միջոցով կարողանա ակտիվ մասնակցություն ցույց տալ մեր սոցիալիստական շինարարությանը:

2. Դրա համար գու պետք ե կիսագրագետի կարգալու ունակություններն ամրացնես ախաղես, վոր նա կարողանա կարդալ ինքնուրույն:

3. Ընթերցանությունը կիսագրագետին այնպես սովորեցրու, վոր նա կարողանա կարդալ՝ ճիշտ, գիտակցորեն և սահուն:

4. Կիսագրագետները չեն կարողանում միանգամից ազատ և վարժ կարդալ, այլ աստիճանաբար են վարժվում ընթերցանության. և վորպեսզի նրանք կարողանան լավ կարդալ, այդ բանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԱ
ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ
ԳԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
Ակադեմիա Նաւի
СССР

համար կան հատուկ աշխատանքներ, վորոնք բաժանվում են վեց ՄԵԹՈԴԻՍԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
աստիճանի:

ՊԱՐԱՊՄՈՒԽԹԻ ԿԱՐԳԸ

I աստիճան — 10 - 15 պարապմունք

5. Առաջին աստիճանում կիսագրագետների հետ պարապելիս սկզբից ուշագրություն դարձրու նրա ընթերցանության վրա, վոր նա սովորի կարդալ՝ անսխալ ու առանց կանգառներու։ Կիսագրագետը վորպեսզի կարողանա այդ ունակությունը ձեռք բերել, դրա համար հարկավոր ե, վոր նա դասը կարդա բարձրածայն։

6. Նախքան նյութի կարդալը աշակերտին պետք ե ծանոթացնել նրա մտքի և բովանդակության հետ։ Նախ ունեցիր նախապատրաստական զրույց և ապա անցիր ընթերցանության։

7. Նախքան ընթերցանության անցնելդ, հոդվածից ընտրիր այն բառերը, վորոնք դժվար հասկանալի յեն կիսագրագետների համար և զրույցի միջոցով բացատրիր նրանց։ Իսկ այն բառերը, վորոնք դժվար են արտասանվում, վարժեցրու վասկերով կարդալ, մինչև վոր կարողանա ամբողջ բառը վարժ կարդալ. որինակ՝ ինդուս-տրիա-ցում, ար-տա-զրու-թյուն։

8. Անհասկանալի բառերը բացատրելուց, դժվար արտասան վոր բառերը լավ կրկնելուց հետո, դու ինքդ կարդա հոդվածը։

9. Ցերք ինքդ կարդացիր, այնուհետև՝ հերթով և բարձրա- ՄԵԹՈԴԻՍԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ձայն կարդալ տուր աշակերտներին. իսկ մյուս կիսագրագետները թող, վոր իրենց գրքի վրա հետևեն ընկերոջ կարդալուն։

10. Ցերք ընթերցող աշակերտը բառը ճիշտ չի արտասանում, ստիպիր, վոր նորից կարդա և ինքն ուղղի իր սխալը, իսկ դու միայն սխալ շեշտը և արտասանությունն ուղղիր։

11. Ընթերցանությունը վերջացնելուց հետո աշակերտներին հարցեր տուր իրենց կարդացած հոդվածի շուրջը և նյութը հարցերով կապիր նրանց արորյա կյանքի հետ։ Այս ձեռվ դու կիսագրագետներին կսովորեցնես դասը կարդալ մտածված կերպով։

II աստիճան — 15-20 պարապմունք

12. Ցերք աշակերտը կսկսի ավելի ուղիղ կարդալ, քան առաջ եր նա կարդում, այն ժամանակ անցիր ընթերցանության դաս պարապելու հետևյալ ձևին։

ՆՊԱՏԱԿԸ — ամբազնել աշակերտի մեջ անսխալ, առանց կանգ առնելու և մտածված կարդալու ունակությունը. (ավելի հասկա-նալ կարդացածը):

13. Այստեղ ևս ամեն մի պարապմունք պետք ե տանել զրույցի միջոցով, ինչպես և ամեն մի դժվար հասկանալի բառը վերլուծել։

14. Այս բոլորից հետո ամեն մի աշակերտ դասը կարդում ե մտքում։

15. Մաքում կարդալուց հետո պետք է անցնել դասի ստուգ-ՄԵԹՈԴԻԱՏԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԱՄՐ

ման, վորի համար աշակերտները հերթով կարդում են բարձրածայն:

16. Դասի ստուգման ժամանակ, յերբ աշակերտը կարդում է բարձրածայն, պայքարիր նրա սխալների գեմ, ուղղիր և ստիպիր, վոր աշակերտն ուղղիր իր թույլ տված սխալը

17. Ընթերցանությունն ստուգելուց հետո, ստուգիր, թե վրդքան են աշակերտները հասկացել կարդացածի միտքը: Այս բանի համար աշակերտներին կոնտրոլային հարցեր տուր կարդացածի շուրջը:

III աստիճան—5-10 պարապմունք

18. Այս ձևով անցնելուց հետո աշակերտությանը տուր ավելի դժվար առաջադրություններ, վորպեսզի սովորեն լավ հասկանալ և խորանալ կարդացածի մեջ: (արտահայտիչ ընթերցանություն):

19. Դրա համար ընթերցանության դասը անցիր այնպես, վոր աշակերտները կարողանան կարդացածի մեջ վորոնել և գտնել այն պատասխանները, վորոնց հարցերը գուր տվել են նախապատրաստական զրույցի ժամանակ:

20. Նախքան հոդվածի կարդալը, ինչպես միշտ, այստեղ ել զրույցի միջոցով տուր դժվար բառերի բացատրությունը և այդ դժվար բառերը գրիր գրատախտակի վրա: Գրելուց հետո խնդրիր

աշակերտներին, վոր նրանցից մի քանիսը հերթով այդ գրածը բարձրածայն կարդան և այնուհետև գրեն իրենց տեսրերում:

Կիսազրագետներին աստիճանաբար սովորեցրու, վոր դժվար բացատրված բառերը իրենք գտնեն բառարանների մեջ:

21. Զրույցից և հոդվածը վերլուծելուց հետո թող վոր աշակերտները դասը կարդան իրենց մտքում: Կարդալու ժամանակ նրանք պետք է գտնեն և ընդգծեն հոդվածի մեջ յեղած իրենց տըված հարցերի պատասխանները: Հարցերը տուր քիչ, 3-5, և այն ել վոչ ամբողջ հոդվածի վերաբերմամբ, այլ զիսավոր կետերի:

22. Թույլ աշակերտներին տուր ավելի հասարակ հարցեր:

23. Յերբ կիսազրագետները կարդում են իրենց մտքում և քոտաված հարցերի պատասխաններն են փնտրում, հետևիր և տես, թե ինչպես են փնտրում, թե ինչպես են նրանք տանում այդ աշխատանքը: Մուեցիր յուրաքանչյուր աշակերտին առանձին, խորհուրդ տուր և ունիր նրան այդ աշխատանքի մեջ: Առանձին ուշադրություն դարձրու ավելի թույլերի վրա:

24. Այս ձևով աշխատանք տանելուց հետո, վորպեսզի ստուգես ամեն մի աշակերտին, դուրս կանչիր և պահանջիր, վոր նա իր գրած պատասխանները կարդա բարձրածայն:

25. Խոկ յերբ աշակերտը կարդում է բարձր ձայնով, ուշադրություն դարձրու նրա արտասանության վրա և ուղղիր սխալները:

26. Կարդալուց հետո հարցերով ստուգիր, թե աշակերտը վհրքան և յուրացրել հոդվածը:

27. Յերբ աշակերտները սովորեցին լավ կարդալ և գտան գրքեր մեջ քո տված հարցերի պատասխանները, ոյն ժամանակ անցիր այն նախագծի—պլանի ընթերցմանը, վորը դու նախորոք գրել ես գրատախտակի վրա:

ՀՈԴՎԱԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ (պլանը) — դա հարցացուցակ ե, վորը ցույց ե տալիս, թե ինչի մասին և ինչ կարգով ե խոսվում հոդվածի մեջ,

28. Ինքդ առաջուց պատրաստվիր պարապվելու համար, հաժանիր հոդվածը մասերի, վորոնիր առաջուց յուրաքանչյուր մասի հարցը (վերնագիրը): Հենց այդ վերնագրերը կկազմեն հոդվածի նախագիծը: Նախագծի հարցերը պետք ե ընդունեն ամբողջ հոդվածի միտքը:

29. Նախ քան հոդվածի կարդալը աշակերտության հետ, զըրույց ունեցիր: Նրանց հետ միասին վերլուծիր հոդվածի մեջ յեղած բոլոր դժվար բառերը:

30. Գրիր գրատախտակի վրա այն նախագիծը, վորը դու կազմել ես տանը: Կարդա աշակերտության հետ միասին և վերլուծիր:

31. Պատվիրիր աշակերտներին մտքում կարդալ հոդվածը, բաժանել մասերի և ընդգծել: Հոդվածը պետք ե բաժանել այնքան մասերի, վորքան հարցեր կան նախագծի մեջ:

32. Յերբ աշակերտները հոդվածը բաժանում են մասերի, այդ ժամանակ մոտեցիր և ոգնիր նրանց:

33. Աշակերտները յերբ հոդվածը ինքնուրույն կերպով վերլուծեն, թող, վոր հետո նրանք հերթով կարդան, իսկ դու ստուգիր:

34. Ամեն մի կիսազրագետ պետք ե կարդա բարձր ձայնով հոդվածի մի մասը: Հետեւիր, վորպեսզի կարդացողը կարողանացույց առաջ մասի, թե վերտեղ ե նշանակել ինքը մասի վերջը:

35. Թույլերին կարդալ տուր ավելի կարճ ե թեթև մասերը:

36. Բարձր ընթերցանությունն ստուգելու ժամանակ հետեւիր, վոր աշակերտները կարդան ձիշտ և շեշտով:

37. Ընթերցանությունն այստեղ ևս վերջացրու հարցերով: Հարցեր տուր կարդացածի շուրջը, վոր կապ ունենա անցնելիք նյութի հետ:

Վ ասինան — 5-10 պարապմունք

38. Այստեղ նախագծման ավելի բարդ աշխատանք տար աշակերտների հետ:

39. Ինքդ տանը հոդվածը լավ մշակիր, բաժանիր մասերի և ամեն մի մասին տուր վերնագիր, այսինքն կազմիր հոդվածի նախագիծը:

40. Նախ քան դասը, հոդվածի միջից ընտրիր ավելի դժվար բառերը:

41. Քո կազմած նախագիծը գրիր զրատախտակի վրա այս՝ ՄԵԹՈԴԻՍԻ ԴԻՏՈՂՈԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
պես, վոր հարցերը լինեն վոչ թե կարգով կամ հերթով դասավոր-
ված՝ որինակ I, II, III, IV և այլն, այլ խառն ձեռվ՝ որինակ II, IV, III,
I և այլն:

42. Ցեղե գրքում հոդվածը գծերով բաժանված չե մասերի,
ցույց տուր աշակերտներին, թե ի՞նչպես պետք ե հոդվածը գծե-
րով բաժանել մասերի:

43. Այնուհետև մասերի բաժանված հոդվածը տուր, թող ա-
շակերտությունը կարդա մտքում և պահանջիր կիսագրագետներից,
վոր նրանք յուրաքանչյուր բաժանած մասին գրատախտակի վրա
գրած վերնագրերից իրենց վորոշած մասերի համար ընտրեն հար-
մար վերնագրեր:

44. Այդ պարապմունքի ժամանակ ոգնիր թույլերին:

45. Ստուգելու համար, ինչպես և միշտ, հարցը տու աշակերտ-
ներին հերթով: Բարձր ձայնով կարդալ տուր հոդվածի այն մա-
սերը, վորոնց դու առաջուց բաժանել ես: Աշակերտներից ամեն
մեկը կարգում ե մի մասը:

46. Յուրաքանչյուր աշակերտ հոդվածի մի մասը կարդալուց
առաջ, կամ հետո, պետք ե ասի, թե ի՞նչ վերնագրի ե տվել այդ
մասին և ինչու:

47. Ընթերցանության ստուգման ժամանակ ուշադրություն
դարձրու, վոր կարդան ձիշտ և առողաճությամբ:

48. Կարդացածի շուրջը տարած աշխատանքը վերջացրու հար-
ցեր տալով:

VI ասինանի—10 պարապմունք

49. Կիսագրագետների ավելի ուժեղ խմբակներում կարելի
յե տանել ավելի բարդ աշխատանք:

Որինակ. Կարդացած հոդվածի նախագիծ կազմելը մտքում կար-
դալուց հետո: Մեծերի մեջ այս ձևով տարած աշխատանքը վերջնա-
կանապեր կամրապնդի նրանց ըմբռնողությամբ (լավ հասկանալով)՝
կարդալու ունակությունները: Թույլ խմբակներում այս ձևի աշ-
խատանքներ չպետք ե տանել:

50. Առաջարկիր աշակերտներին մասերի բաժանված հոդվա-
ծը մտքում կարդալ: Առաջարկիր նրանց, վոր այդ մասերի համար
ընտրեն վերնագրեր և գրեն նրանց:

51. Ստուգողական բարձր ընթերցանության ժամանակ պա-
հանջիր ամեն մի կարդացողից, վոր նա ասի այդ մասի համար
իր ընտրած վերնագրիրը: Հետաքրքրվիր, թե հոդվածը այդ միենույն
մասին ի՞նչ վերնագրի են տվել ուրիշները:

52. Այս աստիճանի մնացած պարապմունքների ժամանակ
ընթերցանությունը տար այնպես, ինչպես տարել ես նախկին
պարապմունքների ժամանակ:

ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՐԱՊԵԼ ԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ

ԻՆՉ ՆՊԱՏԱԿՈՎ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՏԱՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Քո խնդիրն ե սովորեցնել մեծահասակ կիսագրագետներին գրավոր ուսակությունները կիրառել հասարակական, քաղաքական կյանքում, կազմել գիմում, լրագրային փոքրիկ դիտողություններ, պայմանագրեր, նույնը սոցիալիստական սոցմրցակցության համար:

2. Սովորեցրու կիսագրագետին իր միտքը գրավոր արտահայտել այնպես, վոր ուրիշներին ել հասկանալի լինի: Գրավորը պիտք ե լինի պարզ ու հասկանալի թե գրելու ձևով, թե պարզությամբ և թե բովանդակությամբ:

3. Բոլոր գրավոր աշխատանքների նյութերը տար այնպես, վոր նրանք հասարակական-քաղաքական գնահատում ունենան:

4. Գրություն սովորեցնելու համար աշխատանքները տարվա ընթացքում տար այս կարգով.

ա. Նախ և առաջ կիսագրագետներին սովորեցրու ուղիղ նստել, ուղիղ բռնել գրիչը և կարողանալ պարզ գրել:

բ. Հետո, գլխավորապես, հետեւիր, վոր նրանք գրելու ժամանակ ՄԵԹՈԴԻՒՄԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

տառեր և վանկեր բաց չթողնեն և միևնույն ժամանակ ծանոթացրու ուղիղ գրելու կանոնների հետ (վերջակետ, մեծատառը վերջակետից հետո և անունների համար):

գ. Հետո ծանոթացրու այն հիմնական ուղղագրական կանոնների հետ, վոր մտնում են ծրագրի մեջ, միեվնույն ժամանակ գրավոր վարժություններ կատարելով գործնական թղթեր կազմելու և իրենց մտքերն տրտահայտելու շուրջը:

դ. Խորացրու ուղղագրության ունակություններն աշակերտների մեջ այնպես, վոր նրանք ավելի բարդ վարժությունները կարողնան մշակել և գրել մտածված և ինքնուրույն:

5. Հիշեր, վոր գրավոր աշխատանքներ տանելու համար կաչորս աստիճան:

ՊԱՐԱՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1 ասիճան - 8 - 10 պարապմուն

6. Պարապմունքի հենց սկզբից ավելի շատ ուշագրություն դարձ ըու, վոր գրավորի ժամանակ աշակերտներն ուղիղ նստեն, գրիչը ուղիղ բռնեն, տառերը գրեն ուղիղ ձևով, հավասար, տողի վրա և պարզ ու գեղեցիկ ձեռագրով:

Үлгүпүүлүрдүйн таңынан
Көзүн жүйли күнү:

Կովկասի պատմութեան բարեկարգութեան դպրութեան մասին

Եթողիսի Դաշունքների ՀԱՄԱՐ

7. Սկզբնական գրավոր աշխատանքները տար այսպես՝ կազմիր աշակերտների հետ հարցեր նրանց կարդացածի շուրջը՝ հանիր յեղակացություն և այդ յեղակացությունը մեծ-մեծ տառերով գրիր գրատախտակի վրա և առաջարկիր կիսազբագետներին կարդալ այդ յեղակացությունը և արտագրել տեսրերում:

8. Φρακορ πարտությունների համար կիսագրագետներին բաժանիր մի տողանի տետրեր և ստիպիր, վոր նրանք գրեն խոշոր տառերով՝ յերկու տողերի մեջ։ Միայն առաջին աստիճանի պարապմունքի վերջը ստիպիր, վոր քիչ մանրացնեն տարերը։ Նախորդ յերեսում տես որինակը լավ գրափորի (խոշոր և մասն)։

9. Առաջին աստիճանում քո գլխավոր խնդիրն ե սովորեցնել կիսազբագետներին գրել պարզ և գեղեցիկ, բայց և միւնույն ժամանակ պետք ե հետևեն, վոր նրանք գրեն առանց սիսալի և միտքը բասափորեն պարզ ու կանոնավոր:

II ասինան — 15 պարապմուն

10. Յերբ աշակերտները կսկսեն գրել ավելի պարզ, այն ժամանակ գլխավոր ուշադրությունը դարձրու այն բանի վրա, վոր նրանք բառերի մեջ տառեր և վանկեր բաց չթողնեն։ Կիսագրագետների բառերի պաշարը զուգընթացաբար ավելացրու և սովորեցրու վերջակետի և մեծատառերի գործառնությունը։



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

11. Վորպեսզի կիսագրագետները տառեր և վանկեր բաց չը- ՄԵԹՈԴԻԱՏԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
թողնեն, դրա համար հարկավոր և թույլ խմբակներում 3-4 դաս
պարապմունքը տանել շարժական տառերով:

12. Շարժական տառերով պարապմունքը տար այսպես.

ա) Աշակերտներին տուր շարժական տառեր, թող նրանք
կարդացածի յեզրակացությունը կազմեն նրանցից:

բ) Ոգնիր աշակերտներին, վոր նրանք բարդ դարձվածքները
վերածեն բառերի, վանկերի և տառերի:

գ) Դարձվածքը գրիր գրատախտակի վրա.

դ) Առաջարկիր աշակերտներին այդ դարձվածքը արտագրել
տեսրերում:

13. Ցերք սկզբնական պարապմունքները շարժական տառերով
վերջացրիր, անմիջապես անցիր արտագրությանը գրքեց՝ քո տված
հարցերի համաձայն:

Իսկ ավելի ուժեղ խմբակներում կարող ես սկսել յերկրորդ
աստիճանի գրավորից, առանց կանգ առնելու շարժական տառերով
անցնելու ձեի վրա:

14. Հարցերով արտազրությունն անցիր այսպես. տուր աշա-
կերտներին հարցեր և առաջարկիր, վոր հոդվածի մեջ փնտրեն քո
տված հարցերի պատասխանը և արտագրեն համապատասխան տեղը:

15. Հետագա պարապմունքների ժամանակ աշակերտներին կա-
րող ես զբաղեցնել այնպիսի արտագրությամբ, վորը կավելացնի
նրանց բառապաշարը:

16. Արտագրության այս դասը տար այսպես.

ա) Այն անծանոթ բառերը, վորոնք բացատրել ես մինչև կար-
դալը նախապատրաստական աշխատանքի ընթացքում, գրիր գրա-
տախտակի վրա նրա բացատրությունն առանց այդ անծանոթ բառի:

բ) Առաջարկիր աշակերտներին արտագրել այդ բացատրու-
թյունը և՝ լրացնել այն անծանոթ բառը, վոր պակասում և քո գրա-
տախտակի վրա գրածի մեջ: Գրիր, որինակ, այս դարձվածքը.
այն մի շաբաթ հասարակական միջոցառումները, վարոնիք բարձրացնում
են զյուղատեսական կոչվում են... Աշակերտները արտագրում
են այս և վերջը ավելացնում են «ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒ» բառը

17. Վերջակետի և գլխատառի գործածության վազ ությունները
կատարել տուր բոլոր հիշած աշխատանքների ըն ացքում:

18. Կիսագրագետները վորպեսզի սովորեն վերջակետին և ապա
գլխատառի գործածությանը վերջակետից հետո, վարվիր այսպես.
ա) Գրատախտակի վրա գրիր մի քանի դարձվածքներ առանց վեր-
ջակետի և գլխատառի, նրանց բաժանելով գծերով. որինակ. «Մենք
կողմնակից ենք խաղաղության. || Կապիտալիսները պատերազմ են
ցանկանում. || Մենք պատրաստ ենք կովին. || բ) Առաջարկիր աշակերտ-
ներին արտագրել այս դարձվածքները և դնել վերջակետերն ու
գլխատառերը:

19. Կիսագրագետները վորպեսզի կարողանան գրավորի ժամա-
նակ հատուկ անունները գրել մեծատառով, նրանց հետ միասին
կազմիր հասցեներ, զանազան մարդկանց անվանացուցակ: Թող

աշակերտները գրեն քաղաքների, գետերի, հիմնարկների անունները: ՄԵԹՈԴԻՍԻ ԴԻՏՈՂՈԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

III ասինան — 35-40 պարավմունից

20. Այս աստիճանում կիսազբագետների հետ մշակիր հետեւյալ գրավոր ունակությունները.

ա) յե-ի և ե-ի գործածությունը — գալիս ե, գալու յե:

բ) ռ-ի գործածությունը — ռ-ով գրվող բառերի աղյուսակ կազմելու միջոցով.

գ) Բառի վերջում «թյուն» ածանցի գործածությունը — չարություն, լավություն, տնտեսություն, արդյունաբերություն.

դ) «յ» կիսաձայնի գործածությունը՝ յերկու ձայնավորների մեջ — գոյություն, Հայաստան, Եյխն.

ե) Ուղագրության ժամանակ անցնել՝ բառակազմությունը — պարզ, բարդ յեկ ածանցալոր բառեր.

զ) Խսկ ավելի ուժեղ խմբերում կարելի յե անցնել հնչյունները — ձայնավոր, բաղաձայն, կիսաձայն և յերկարբառ:

21. Այս բոլոր թված ունակություններն անցնելուց հետո պարապմունքները տար այսպիս:

ա. Գրատախտակի վրա գրիր այնպիսի դարձվածք, վորի մեջ լինի մշակած քերականական կանոնը.

բ. Առաջարկիր աշակերտներին, վոր ուշադրությամբ նայեն գրատախտակի վրա գրած դարձվածքին:

գ. Գրատախտակից ջնջիր գրածդ և ստիպիր, վոր աշակերտները այդ նույնը գրեն հիշողությամբ:

22. Տուր և մի ուրիշ ձեկի աշխատանք. գրիր գրատախտակի ՄԵԹՈԴԻՍԻ ԴԻՏՈՂՈԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

վրա մի այնպիսի բառ, վորի մեջ լինի սովորեցրածդ կանոնը: Առաջարկիր աշակերտներիդ մտածել և գրել այնպիսի մի դարձվածք, վորի մեջ լինի այդ բառը: Մշակում ես, որինակ, «յու» յերկարբառը: Առաջարկիր աշակերտներին «զյուդ» բառի շուրջը կազմել և գրել վորկ և դարձվածք: (Նոր-շեն գյուղի գյուղացիները կազմեցին կոլեկտիվ տնտեսություն):

23. Հիշեր, վոր յերկարբառով բառեր գրելը մեծերին շատ դըժվարությամբ և հաջողվում: Ոգնիր աշակերտներին այդ աշխատանքների ժամանակ:

Նախ կազմիր բառերի աղյուսակ և ապա անցիր յերկարբառուի շուրջը դարձվածքներ կազմելուն:

Որինակ՝ յուզ, յուղոտ, յուղալի:

գյուզ, գյուղեր, գյուղացի.

մյուս, ապյուս, անկյուն.

ալյուր, հարյուր,

կորյուն, Հարություն.

աշ-խաւոություն.

սոց-մըր-ցակ-ցություն.

հար-վա-ծայ-նություն

ար-դյունաբերություն:

24. Բացի այս գրավոր աշխատանքների մշակումից, ծանոթացրու զուգնթացարար և ուրիշ գործնական գրությունների հետ,

ինչպես որինակ—գիմում, ստացական, սոցմրցման պայմանագիր ՄԵԹՈԴԻՍԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
և փոքրիկ լրագրական գիտողություն:

IV աստիճան—10 պարապմունք

25. Ցեղե, համաձայն ծրագրի, կանցնես քերականական ունակությունները, այն ժամանակ աշակերտների մեջ ամրացրու ամբողջ անցածներդ կրկնողությամբ. նամանավանդ ուշադրություն դարձրու կիսագրագետների վրա, վորպեսզի նրանք կարողանան ինքնուրույն կերպով արտահայտել իրենց մտքերը գրավոր:

26. Կրկնողության վարժություններն անցիր այս ձևով. ա) գրատախտակի վրա գրիր դարձվածքը (դարձվածքը կապիր իրենց անցած հոգվածի հետ).

բ) Առաջարկիր աշակերտներին ուշադրությամբ դիտել այդ գրածը.

գ) Դարձվածքը չնշիր և առաջարկիր աշակերտներին գրել հիշողությամբ:

27. Ինքնուրույն գրավոր ունակությունները մշակելու համար բարձր ձայնով կարդա մի փոքրիկ պատմություն. Առաջարկիր աշակերտներին գրել այդ պատմությունն այնպես, ինչպես իրենք հասկացել ու հիշում են:

28. Առաջարկիր աշակերտներին, վոր ինքնուրույն մի փոքրիկ հոգված գրեն «Աշխատանքն արտադրության մեջ» նյութի,

սոցմրցակցության, հարվածայնության, կոլխոզ աշխատանքների ՄԵԹՈԴԻՍԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
և այլն մասին:

Նախորդը զբույց ունեցիր աշակերտների հետ, թե ինչի մասին
և ինչ ձևով պետք է գրեն:

29. Այս բոլոր գրավոր աշխատանքների վերջը աշխատանքներ
տար աշակերտների հետ՝ կուլեկտիվ կամ անհատապես՝ կազմել
նամակ, համառոտ հոգված լրագրի համար և փոքրիկ պատմվածք:

ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ ԻՆՉՊԵՍ ՏԱՆԵԼ ԼՐԱԳՐԱՅԻՆ

ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ի՞նչի ՀԱՄԱՐ ՅԵԼ ԻՆՉՊԵՍ ՏԱՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Հիշեր կենինի խոսքերը՝ «լրագիրը վոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ ու կոլեկտիվ ազիտատոր ե, այլև կոլեկտիվ կաղմակերպող ե».

2. Թո խնդիրն ե լրագրի ոգնությամբ կիսագրագետներին դիտակցորեն մասնակից դարձնել սոցիալիստական արշավին: Դու պհառ ե նրանց այնպես սովորեցնես, վոր կարողանան ինքնագարգ ացման համար ոգտվել լրագրից:

3. Դրա համար լրագրային աշխատանքը տար այնպես, վոր աշակերտները նրա մեջ կարողանան գտնել որվա գլխավոր քաղաքական հարցերի վերաբերյալ բացարություններ:

4. Կիսագրագետներին սովորեցրու, վոր նրանք անպայման հետեւն լրագրին և կարողանան ինքնուրույն կերպով ոգտվել նրանից:

5. Աշխատիր, վոր քո աշակերտներն անպայման բաժանոր- ՄԵԹՈԴԻԱՏԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

դագրվեն լրագրին:

6. Լրագրային աշխատանքները տար ինչպես ընդհանուր գուսերի ժամանակ, նույնպես և առանձին լրագրային պարապ- մունքներին հատկացրած դասերին (ժամերին):

7. Լրագրային աշխատանքները կիսագրագետների հետ տար ամբողջ տարվա ընթացքում — աշխատանքների սկզբից մինչև վերջը:

8. Հիշեր, վոր լրագրային աշխատանքը գնալով պիտի զարգանա- ու բարեփանա:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԿԱՐԳԸ

9. Կիսագրագետին վորպեսզի հետաքրքիր դարձնես լրա- գրային աշխատանքը, այդ պատճառով լրագրային աշխատանքը նրա համար պետք ե լինի ինչպես դաս և ամեն որ նա պետք ե մի փոքրիկ կտոր կարդա լրագրից:

Կարդացած կտորը պետք ե համապատասխանի սովորողների շահերին: Որինակ. յեթե քո աշակերտները գյուղացիներ են, կարդա կոլեկտիվացման մասին, խոշոր կոլխոզների գործունեյության, խորհուտեսությունների մասին, ուրիշ յերկրների գյուղացիների դրության մասին և այլն: Դրանով դու նրանց մեջ հետաքրքրու- թյուն առաջ կը բերես:

10. Ուրիշ լրագրների հետ՝ կենտրոնական, տեղական բանվորա- կան, գինվորական, գյուղացիական, ավելի ուշ ծանոթացրու:

Այսպես պետք է վարվել թե լավ կարդացողների և թե վատ ՄԵՅՈՒՍԻ ԴԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
կարդացողների հետ: Աշակերտների հետ միասին ընտրիր ավելի
հասարակ ու նրանց սրտին ու հասկացողության մոտիկ լրագիր:

Նոր կարդալ սովորող կիսագրագետ զյուղացիները կարող են
ընտրել զյուղացիական լրագիր: Մանվածադործների համար կա-
րելի յե ոգտագործել տեղական բանվորական լրագիրը:
(Որինակ Լենինականի „Բանվոր“ լրագիրը:)

11. Կիսագրագետներին սովորեցրու ուշագրություն դարձնել
լրագրի որվա, ամսվա և տարվա թվի վրա:

12. Կիսագրագետների մեջ սովորություն մտցրու, վոր՝ լրագիրը
սկսեն կարդալ ցուցագրական մասից՝ „Այսորվա համարում“:

13. Աշակերտներին ցույց տուր լրագրի այն մասը, վորտեղ
գրված ե միջազգային կյանքի, Խ. Ս. Հ. Մ. լուսավորության, տնտե-
սական, խորհուրդների և զանազան տեղեկությունների և այլնի
մասին:

14. Այնուհետև սովորեցրու աշակերտներին լրագրի վերնագիրը
կարդալ: Հոդվածները բարձր ձայնով ինքդ կարդա: Ցույց տուր,
թե ինչպիսի վերնագրերով կարելի յե իմանալ լրագրի բովանդա-
կությունը:

15. Ցույց տուր, վոր լրագրում լինում են՝ հոդվածներ, հերա-
գրներ, փոքրիկ դիտողություններ, թղթակցություններ տեղերից:

16. Այս ըոլորից հետո աշակերտներին սովորեցրու լրագիրը
կարդալ ինքնուրույն: Սովորեցրունքանց կարդալնախ առաջնորդողը

և հարկավոր հեռագրները կամ փոքրիկ դիտողությունները, ՄԵՅՈՒՍԻ ԴԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
վորոնք սովորաբար զետեղված են լրագրի առաջին յերեսում:

17. Ցույց տուր, վոր հեռագրների և փոքրիկ դիտողություն-
ների վերնագիրը ավելի յեն ոգնում բովանդակությունը հասկա-
նալու, քան հոդվածները:

18. Սովորեցրու քո աշակերտներին, վոր լրագրի միջի հոդ-
վածը կարդան մաս-մաս. մտածեն յուրաքանչյուր մասի շուրջը և
այնուհետև կարդան ամբողջապես հոդվածը:

19. Սովորեցրու կիսագրագետներին, վոր լրագիր կարդալու
ժամանակ անհասկանալի բառերը նայեն բառարանի մեջ և ոգտվեն
նրանից:

20. Հոդվածներ և հեռագրներ (հատվածներ) կարդալու ժամա-
նակ գործածիր քարտեղ:

21. Ուսման տարվա վերջում հանձնարարիր աշակերտներին,
վոր բանագոր կերպով լրագրի բաժինների մասին զեկուցեն:

22. Աշխատիր, վոր լրագրներ կարդալուց հետո աշակերտ-
ները ցանկություն հայտնեն իրենք ևս գրելու լրագրում: Կազմա-
կերպիր պատի թերթի համար դիտողություններ կազմել, իսկ ա-
վելի հետո՝ նույն անել և տպագրված լրագրի համար:

ԻՆՉՊԵՍ ՏԱՆԵԼ ԳՐՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ՏԱՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Քո խնդիրն ե կիսագրագետներին գրքի միջոցով սովորեցնել, խորացնել և մեծացնել այն գիտելիքները, վոր անհրաժեշտ են հասարակական և արտադրական աշխատանքները բարելավելու համար:

2. Դու պետք ե կիսագրագետին սովորեցնես գրքի հետ ինքնուրույն գործ ունենալ, հետաքրքիր դարձնես նրա համար զիրք կարդալը:

ԻՆՉՊԵՍ ՏԱՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ

3. Գրքի վրա աշխատելը սովորեցրու հենց պարապմունքների սկզբից, յերբ սկսում ես աշխատանքները և այդ ձեռվ շարունակիր մինչև տարվա վերջը:

4. Ամենից առաջ կիսագրագետին սովորեցրու, վոր նա կարդագրքի անունը, հեղինակի ազգը և հրատարակության թիվը:

5. Հետո սովորեցրու աշակերտներիդ ոգտվել վերնագրերից, ՄԵԹՈԴԻՍԻ ԴԻՏՈՂԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ցույց տուր, թե ինչպես վերնագրով իմանալ գրքի բովանդակությունը և ինչպես գրքում գտնել իր ուղած մասը:

6. Սովորեցրու աշակերտներիդ կարդալու ժամանակ ոգտվել բառարանից:

7. Կիսագրագետին սովորեցրու գրքի կարեոր տեղերն արտադրել (քաղվածք), վոր շատ կոզնի կարդացածը յուրացնելուն:

8. Սովորեցրու կիսագրագետին, վոր նա գիրքը կարդա մըտածելով, գանդաղ և առանց շտապելու: Սովորություն գարձրունանց մեջ մասերով կարդան ու ամեն մի հատվածի մասին մըտածելը, և մասերը կարդալուց հետո՝ ընդհանուր կերպով անբողջնաշքի անցկացնելը:

9. Կարդալու սովորությունը նրանց մեջ կամաց-կամաց զարգացրու: Սկզբում զրույց ունեցիր ամբողջ խմբակի հետ արտադըպորցական ընթերցանության նշանակության և անհրաժեշտության մասին: Դասարանում վորպեսզի կարդացողների կորիզ ստեղծվի, տուր մի յերկու-յերեք հոգու հետաքրքիր գրքեր տանը կարդալու համար: Մի քանի ժամանակից հետո, դասերից գուրս, այդ գրքեր կարդացողներին հարցրու գրքի բովանդակության մասին Այսպիսի զրույցներից մեկի ժամանակ, տանը գրքեր կարդացողներին առաջարկիր դասի ժամանակ պատմել իրենց կարդացածը: Նրանց որինակը մյուսների մեջ ևս առաջ կրերի տանը ընթերցանությամբ պարապվելու ցանկություն: Այս ձեռվ դու աստիճանաբար գեպի

արտադպրոցական ընթերցանությունը կքաշես սովորողների ամ- ՄԵԹՈՂԻՍԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
բողջ խումբը:

10. Կազմակերպիր գասարանում հետաքրքիր գրքի բարձր ձայնով ընթել ցումը. աշակերտների հետ միասին քննադատիր կարգացածը. Դա կուժեղացնի աշակերտների մեջ գիրք կարդալու ցանկությունը:

11. Արտադպրոցական ընթերցանության համար առաջին հերթին տուր այնպիսի գրքեր, զոր հրատարակված են հատուկ կիսագրագետների համար. Այդ գրքերը տպագրված են խոշոր տառերով, լեզուն հասկանալի յեւ և զարդարված են նկարներով:

12. Շարունակ կապ ունեցիր գրադարանապետների և գիրք բերողների հետ. փոխանակիր նրանց հետ գրքերը և յերբեմն նրանց դպրոց հրավերեր գիրք կարդալու և գրքի մասին խոսելու համար:

13. Միջոցներ ձեռք առ, զոր ուսման տարին վերջանալուց շետո աշակերտներդ մոարիկ գրադարաններում գրվեն: Ծանոթացրու նրանց գրադարանի կարգ ու կանոնի հետ և թե ինչ ձեռվ ու ինչպես պետք ե ստանան և փոխեն գրքերը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ

Ընտրիր նյութը, բաց թողած տեղերը լրացրու հետևյալ որինակելի գասերում: (Այս աշխատանքը խորհուրդ ենք տալիս լրացնել մեթոդիստի ղեկավարությամբ):

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍ № 1. (Կարգալ յեվ գրել)

ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Զբոյց թեմայի շուրջը:

Ընթերցանություն Ընթերցանության

տեխնիկայի զարգացումը — ուղիղ կարդալ: (Պարապմունքի առաջին աստիճանը):

Գրավոր. — Պարզ գրության ունակությունների մշակումը՝ գրատախտակից արտադրության միջոցով: Արա հետ միասին ուշագրություն դարձնել գերջակետից հետո մեծատառով գրելու վրա:

ԱՄԻ ՀՆԹԱՑՔՆ

րույցը տարվում ե հետեւյալ հիմնական հարցերով.

Նախապատրաստական զրույցի ժամանակ վեր են լուծվում հետեւյալ դժվար հասկանալի բառերը

ացատրվում են հետեւյալ դժվար արտասանելի բառերը . . .

Դատմվածքի կամ հոդվածի կարդալը (վերնագիր)

תְּרֵפָה *יְרֹבָעַ*

Դասատուն պարզ և բարձր ձայնով, կարդում ե նշանակած պատմվածքը:

յնուհետեւ աշակերտներին հերթով բարձր կարդալ ե տալիս: Առաջին
շակերտը կարդում ե մինչև , յերրորդը՝ :
Յերր մեկը կարդում ե, մյուսները նայում են գրքին և հետեւում են ընկերոջ
արդարուն: Յեթե աշակերտը սխալ ե կարդում (տառ ե բաց թողնում, վանկ,
ամ մի բառի փոխարեն կարդում ե մի ուրիշը), դասատուն նրան կանգնեց-
ում ե և ստիպում ե նորից կարդալ: Յերր կարդացողը շեշտի կամ
որտասանության մեջ սխալվում ե, այդ դասատուն դիմում ե նրա ընկեր-
ության, վոր սխալն ուղղեն, կամ թե չե հենց ինքն ե ուղղում:

Միշտ այս տեսակ սխալն ուղղելուց հետո, կարդացողը կը կնուս և ուզգած կ ձիշտն արտասանում: Ցերը այս ձեզի ընթերցանությունը վերջաց- ում էն, դասատուն աշակերտներին տալիս ե ստուգողական հարցեր. . .

Գրավոր Աշակերտները դաստիվի գեկավարությամբ կազմում են, որին հետևյալ յեղակացությունը

Դասատուն այս յեզրակացությունը գրելով գրատախտակի վրա, աշա-
կերտների ուշադրությունը դարձնում է վերջակետի վրա և վերջակետից հետո

մեծատառով գրելու վրա: Այնուհետև աշակերտները այս յեզրակացությունն արտագրում են իրենց տեսրերում, հետեւ մեծատառի և վերջակետի կանոններին: Տետրերը պետք է լինեն մի տողանի:

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍ № 2 (Կարդալ և գրել)

ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Զրոյց թեմայի շուրջը

Ընթերցանություն մտածված և արտահայտիչ ընթերցանության ուժեղացումը, վորոշ, ընտրովի տեղերի կարդալը (յերրորդ աստիճան)

Գրավոր. Վարժություններ վերջակետի և մեծատառի շուրջը (յերկրորդ աստիճան):

ԴԱՍԻ ՀՆԹԱՑՔԸ

Զրոյցը տարվում է հետեւալ հիմնական հարցերով

Նախապատրաստական զրույցի ժամանակ բացատրվում է հետեւալ դժվար հասկանալի բառերը

Վերլուծության են յենթարկվում հետեւալ դժվար արտասանելի բառերը

Ընթերցանություն

պատմվածքի (կամ հոդվածի) գրքից, յերես

Դասատուն ասում ե՞ս պատմվածքը (կամ հոդվածը)

Կարդացեք նախ ձեր մտքումը: Կարդալու ժամանակ ընդգծեք այն տեղերը, վորոնք պատասխանում են այն հարցերին, վորոնց յես հիմա կգրեմ գրա-

տախտակի վրա: Հետո մենք կհամեմատենք, թե ով ի՞նչպես է արել». Դասատուն գրատախտակի վրա գրում է հետեւալ հարցերը

Աշակերտներն արտագրում են հարցերը և հետո լուս կարդում, վնասրում և գտնում են պատասխանները հոդվածում: Դասատուն հետեւմ ե այդ աշխատանքներին և ոգնում ե աշակերտներին իր խորհուրդներով և բացատրություններով: Այս բոլորից հետո սկսվում ե բարձրաձայն ստուգողական ընթերցումը:

Ոմեն մեկը, վորին հարցնում ե դասատուն, կարդում ե նախ հարցերը և ապա այդ հարցերին վերաբերյալ կտորները: Յեթե աշակերտը պատասխանը սխալ ե տալիս, այն ժամանակ նրա սխալը ուղղում ե ընկերը կամ ինքը դասատուն: Առաջին հարցին պատասխանում ե դասի այն կտորը, վոր սկսվում ե՝ բառից, մինչեւ բառը:

Յերկրորդ հարցին՝

Յերբ ստուգողական ընթերցումը վերջանում ե, դասատուն տալիս ե հետեւյալ հարցերը՝

Գրավոր — Դասատուն կարդացած հոդվածից գրատախտակի վրա գլուխում ե հետեւյալ դարձվածքը

Հետո դասատուն սովորողների հետ միասին սկսում ե քննել, թե ինչույն վերջակետը հենց այստեղ: Դասատուն ասում ե. «Տեսնենք կարելի՞ յեւ մի ուրիշ տեղ գնել վերջակետը: Որինակ՝ առաջին՝ բառից հետո, իսկ առաջին յերկու՝ հետո:

Այստեղ ամեն դեպքում ել միտքը պարզ չե: Միտքը պարզ ե միայն բառից հետո: Ահա այստեղ ե, վոր հար-

կավոր ե գնել վերջակետ»:

Ուսուցիչը շարունակում ե.

«Հիմա յես կգրեմ գրատախտակի վրա հոդվածի կարճ բովանդակությունը: Մինչեւ յես կգրեմ, դուք ուշադրությամբ հետեւցեք իմ ձեռքի շարժումներին: Վերջակետերն ու մեծատառերը յեւ չեմ գնի, արտագրության ժամանակ ինքներդ գրեք»:

Դասատուն գրում ե

Աշակերտները գրում են հատվածը, հետո դնում են վերջակետերը և մեծատառերը:

Այնուհետև դասատուն ցույց ե տալիս գրատախտակի վրա վերջակետի և մեծատառերի տեղերը, իսկ աշակերտները գրատախտակին նայելով ստուգում են իրենց աշխատանքները:



52.343

143%



821

2

Սրբագրեց և թողարկեց Գ. ԲԱԲՈՒՐՅԱՆ

Թիֆլիս, տպարան, պոլիգրաֆիկութեատր Հայոց Տիգան Նո 951. Գլան Նո 1102 Տիգան 1000.